«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Գառնիկյան Ֆենյա Վարազդատի

Ուսումնական հաստատություն՝ Ա. Չեխովի անվան № 55 հիմնական դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն----------3
2. Էպոսների համամարդկային արժեքը----------5
3. «Սասունցի Դավիթ» էպոսի ազգային և համամարդկային արժեքները----------10
4. Եզրակացություն----------18
5. Հավելված----------19
6. Օգտագործված գրականության ցանկ----------20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից աշխարհում դարակազմիկ փոփոխություններին, երկրի ներքին ու արտաքին մարտահրավերներին դիմագրավում է ազգի բարոյական և հոգևոր միասնությունը, համազգային գաղափարների ներդրումն ու իրականացումը: Այդ խնդիրների մեջ կարևորը արժեքային համակարգի, նրա հիմնադրույթների մշակումն է, որ իրականացվում է (կիրականացվի) հասարակական-քաղաքական, հոգևոր-մշակութային, կրթական և այլ ինստիտուտների կողմից՝ դրանով ապահովելով առաջին հերթին երկրի ազգային անվտանգությունը՝ միաժամանակ չհեռանալով համամարդկային արժեքներից: «Համամարդկային արժեքների կարգավորման համար իրավական-կանոնակարգող հիմք են հանդիսանում ՅՈՒՆԵՍԿՕ-ի, Համաշխարհային բանկի, Եվրոպական խորհրդի և միջազգային այլ կազմակերպությունների կողմից ներկայացվող միջազգային համաձայնագրերն ու օրենսդրական ակտերը, որոնք ձևավորում, կազմակերպում և կարգավորում են համաշխարհային կրթական տարածք»[1]:

Արժեհամակարգը մարդու գեղագիտական, բարոյական, մշակութային, հոգևոր իմացական, էթնիկական արժեքների խումբն է, որն անհրաժեշտ է անձի համակողմանի և ներդաշնակ ձևավորման և զարգացման համար: Այն ձևավորվում է ընտանիքում, ուսումնական, սոցիալական և այլ միջավայրերում:

Դպրոցը՝ որպես արժեհամակարգի ձևավորման հաստատություն, անցյալի փորձի յուրացմամբ ձևավորվում է հայրենասիրություն, ինչպես նաև ժողովրդի պատմության, գիտության, մշակույթի արժեքների ու նվաճումների հանդեպ հպարտության զգացում, պատասխանատվություն և դրանք պահպանելու ու զարգացնելու ուղղությամբ գիտելիքներ, որոնք վերածվում են համոզմունքերի և կարողությունների, նաև կամքի ու հաստատակամության:

Գրականության դասերը առավել ևս ունեն լայն հնարավորություններ արժեհամակարգային խնդիրների լուծման ուղղությամբ:

Սույն հետազոտական աշխատանքի նպատակն է տարբեր ժողովուրդների էպոսների օրինակով ցույց տալ նրանց՝ խաղաղության, ազատության, արդարության,

[1] Բաբայան Ի. Գ., Ընտանիքի՝ որպես սոցիպ-մշակույթային միջավայրի ազդեցությունը երեխայի դաստիարակության վրա

հայրենիքի ու ընտանիքի պահպանության համար մղվող պայքարի հավերժությունը, պայքար, որ սահմաններ չի ճանաչում:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Գնահատել էպոսի արժեհամակարգի հիմնադրույթները ազգային անվտանգության ապահովման գործում:
2. Բացահայտել ժամանակի և տարածության մեջ էպոսի արժեհամակարգի փոփոխությունները և ընկալումները:
3. Համեմատել էպոսի հերոսների զարգացումը ճյուղից ճյուղ՝ ընդգծելով դրա կարևորությունը:
4. Գտնել ընդհանրություններ աշխարհի ժողովուրդների էպոսների հետ:
5. Ցույց տա
6. Դաստիարակել սերնդին հայրենասիրության ոգով:
7. Քննել ժողովրդի արժեհամակարգային հարցերը՝ ուշադրություն դարձնելով նրանց հիմնական, արդիական դրսևորումներին:

Հետազոտության նպատակն է՝

1. Ուսումնասիրել «Սասունցի Դավիթ» էպոսի գաղափարական առանցքները:
2. Մեկնաբանել էպոսի արժեհամակարգը ժամանակի և տարածության համատեքստում:
3. Ցույց տալ էպոսի գաղափարների արդիականությունը, հերոսների պայքարը ազատության, անկախության, պետության ստեղծման համար:
4. Ներկայացնել հայ ժողովրդի խաղաղ ու ստեղծագործ աշխատանքի ձգտումը:

ԷՊՈՍՆԵՐԻ ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ

Էպիկական (վիպական, պատմողական) սեռի ստեղծագործություն է էպոսը, գրական ամենահին ժանրերից մեկը։ Այն հունարեն բառ է. նշանակում է «ասք, պատմություն, խոսք»։

Պատմական իրադարձությունների հիման վրա է ստեղծվում էպոսը,այն էլ՝ մարդկության պատմության ամենահին շրջանում;

Բացի պատմական իրադարձություններից՝ այն իր մեջ ներառում է նաև ժողովրդական ավանդությունները։ Այնտեղ ցուցադրվում են ժողովրդի ոգին, նրա մտածելակերպը, վարքագիծը, պատկերացումները, որոնց շնորհիվ էպոսը մնում է դարերում, հասնում սերունդներին։ Փաստորեն այն ժողովրդական ստեղծագործական մտքի արտադրանքն է, որ բավարարում է հետագա սերունդներին՝ հիմք հանդիսանալով դաստիարակության բարոյահոգեբանական և արժեհամակարգային շատ հարցերի վերլուծության համար։

Ամեն դարաշրջանում էպոս չի ստեղծվում։ Դրա համար անհրաժեշտ են նաև պատմական պայմաններ։ Հին ժողովուրդները՝ հույները, հայերը, ասորիները, հնդիկները, պարսիկները և շատերը, ունեն իրենց էպոսները։ Ազգային էպոսներն իրենց առջև դնում են պետականության խնդիրը, ինչպես նաև սերնդին դաստիարակում ազգային և համամարդկային, բարոյական բարձր արժեքներով։

Դեռևս հին ժամանակներից սկսած՝ տարբեր երկրների իշխան-կառավարիչ-թագավորների կողմից պետական հոգածություն են ունեցել մշակույթի շատ գործիչներ (Հայաստանում՝ Մովսես Խորենացի, Ղազար Փարպեցի, Իտալիայում՝ Մեդիչիներ)։ Որոշ երկրներում հովանավորվել են էպոսը գրի առնելու, ուսուցանելու, տարածելու, ազատագրական պայքարին ոգի հաղորդելու նպատակով (Պարսկաստանում՝ Ֆիրդուսի «Շահնամե», Հունաստանում «Իլիական», «Ոդիսական», Հայաստանում՝ Գ. Սրվանձտյանը, Հ. Օրբելին)։

2006թ.՝ սեպտեմբերի 5-9-ին, աշխարհի 25 երկրների ներկայացուցիչներ հավաքվեցին Բիշքեկում՝ Ղրղզստանի մայրաքաղաքում՝ մասնակցելու ժողովուրդների էպոսների համաշխարհային առաջին փառատոնին։

Հին հույները մեծ տեղ էին տալիս «Իլիականին» և «Ոդիսականին»։ Դրանք բազում արժեքների հանրագիտարան են։ Պլատոնը ասել է. «Հոմերոսը դաստիարակել

է ողջ Հունաստանը»։ Հայտնի է, որ մ.թ.ա VI դարում Աթենքի կառավարիչ Պիսիստրատը կազմել է տալիս հատուկ խումբ, որին հանձնարարում է գրի առնել 2 պոեմների տեքստերը, և Աթենքի աստծո տոնախմբության ժամանակ կարդում էին ժողովրդի ներկայությամբ՝ այսպես թույլ չտալով թափառական աէդներին իրենց «պատկերացումներով զարդարել» պոեմները։

Ըստ ավանդության՝ Լիկուրգոսը Սպարտայում, Սոլոնը Աթենքում մտցրին Հոմերոսի երգերի կատարում։

Հետագայում հունական բոլոր տերություններում դրանք դպրոցական կրթության հիմքը դարձան. աշակերտները անգիր էին անում պոեմի առանձին հատվածներ։ «Իլիականի» ձեռագրերը Ալ. Մակեդոնացին պահել է իր մոտ և երեկոները կարդացել։

Աքիլլեսն ու Ոդիսևսը հույն ժողովրդի տվյալ դարաշրջանի մտքերի և հույզերի լավագույն արտահայտություններն են, մյուսները՝ հույների՝ վաղ շրջանի կյանքի զանազան կողմերի արտահայտիչը։

Հերոսական կերպար է Աքիլլեսը. նա ունի մարդկային թուլություններ՝ քինախնդրություն, դաժանություն (սպանում է տասներկու տրոյացի գերիների, վատ է վարվում Հեկտորի դիակի հետ), բայց նա նաև վեհանձն է, ունի փափուկ սիրտ, երբ տեսնում է ծերունի Պրիամոսի արցունքները։

Ոդիսևսը խելամտության, իմաստության, հնարամտության մարմնացում է. «տրոյական ձիու» միտքը նրանն էր։ Նա հաղթահարում է շատ դժվարություններ, դիմանում գայթակղություններին և վերադառնում հայրենի հող՝ Իթակե՝ չկորցնելով մարդկային բարոյական արժեքները՝ հայրենիքի, ընտանիքի, զոհված ընկերների կարոտը։ Նրան օգնում է համառ ու նպատակասլաց մարդու ոգու ուժը, կենսափորձը, խելամտությունը, համբերությունը։ Նա պաշտպանում է ընտանիքի պատիվը ոտնձգություններից։ Հրաշալի է ննջարանի՝ մի ծառի բնից կերտված լինելու դրվագը, որն ապացուցում է ընտանիքի, արդարության համամարդկային արժեք լինելը՝ անկախ ազգային պատկանելությունից։ Հետաքրքիր է Աքիլլեսի վահանի նկարագրությունը, որը խաղաղ աշխատանքի գովք է։ Փառաբանվում է ոչ միայն հայրենասիրությունը, հերոսականությունն ու ազատությունը՝ որպես արժեքներ, այլև հավատարմությունը, իմաստությունը, ընտանիքը։

Ըստ Հոմերոսի՝ ուժը կարևոր է (Աքիլլես), բայց այն տեղի է տալիս իմաստությանը (Ոդիսևս)։

Համամարդկային արժեքները իրենց արտացոլումն են գտել պարսկական էպոսում՝ «Շահնամեում»։ Այն իրանական կյանքի հանրագիտարան է, որը մշակել է Ֆիրդուսին. նրան եվրոպական իրանագետներից շատերը համարում են պարսկական Հոմերոս։

Խորասանի կուսակալ Աբու Մանսուրը խոստանում է ապահովել Ֆիրդուսու բոլոր կարիքները, ապա հանձնարարում է իր դասթուրին (վեզիրին) հավաքել և շարադրել պարսից թագավորների պատմության գիրքը։ Վերջինս ստեղծում է հանձնաժողով, որի մեջ մտնում են պահլավերեն լավ իմացող և ժողովրդական ավանդություններին քաջածանոթ չորս գիտուններ։ Պատմվում է, որ հանձնաժողովի անդամները տարբեր շրջաններից կանչում էին նշանավոր ծագում ունեցող մարդկանց և գրի առնում Իրանի անցյալի մասին պատմություններ։ Այս ամենից հետո Ֆիրդուսին ձեռնարկում է գրելու գործը և «Շահնամեի» նախերգանքում մի գովերգ նվիրում Աբու Մանսուրին։ Հետագայում էլ գահակալ Մահմուդը ամեն տողի համար Ֆիրդուսուն վճարել է տվել մեկ ոսկի, իսկ տարիներ անց մի ուխտաբեռ ոսկի ուղարկել նրան։

Սա պետական մտածողության, հոգածության փայլուն օրինակ է։

«Շահնամեն» ներկայացնում է հիսուն շահերի կյանքը։ Էպոսի սիրելի հերոսները աչքի են ընկնում առասպելական ուժով, ինչպես տարբեր ժողովուրդների սիրված հերոսները։

Դեռ մանուկ հասակից Ռոստամը աչքի է ընկնում գերբնական ուժով։ Նա սպանում է կատաղի սպիտակ փղին, դառնում Իրանի թագավորների ապավենը Թուրանի դեմ մղած դարավոր պատերազմի ամբողջ ժամանակաշրջանում։ Որքան էլ առասպելական են նրա սխրագործությունները, այնուամենայնիվ երևում է առօրյա մարդն իր ծայրահեղ զսպվածությամբ, խոհեմությամբ, անձնազոհությամբ և բարությամբ։ Քեյ-Խոսրովը ևս Ֆի

Ֆիրդուսին փառաբանում է այն հերոսներին, որոնք նվիրված են եղել երկրին և շատ բան են արել Իրանի հզորացման համար(Ռոստամ ,Քեյ-Խոսրով)։ Դա կարևոր էր Իրանում ուժերի համախմբման և կործանված պետության վերականգնման համար։ Ազատության ու անկախության համար մղվող պայքարի գովերգումը ոչ միայն ազգային է, այլև համամարդկային։

Հետաքրքիր է Ֆինլանդիայի պետական մոտեցումը «Կալեվալա» էպոսի նկատմամբ։

Ֆինլանդիայում ամեն տարի՝ փետրվարի 28-ին, որպես ազգային տոն նշվում է «Կալեվալա էպոսի օրը»։ Այդ օրը ընտրվել է 1835 թվականին առաջին վարկածի հրատարակման կապակցությամբ։ Այդ օրը անց է կացվում երթ՝ հատուկ զգեստներով, ցուցադրվում են էպոսի սյուժեներով թատերականացված ներկայացումներ։

Էպոսը հայերեն է թարգմանել գրող Հմայակ Սիրառը 1972թ-ին, իսկ 1974թ-ին նա ընտրվել է Ֆինլանդիայի «Կալեվալա» ընկերության պատվավոր անդամ։

«Կալեվալան» իր հասարակական-գաղափարական բովանդակությամբ համահունչ է հայկական էպոսի՝ «Սասունցի Դավիթին»։ Այդ ընդհանրությունը հետևանք է երկու ժողովուրդների ազատության, անկախության, ապահով և երջանիկ կյանքի բուռն ձգտումի։

«Կալեվալայի» հերոսները արտահայտում են ֆինն և կարելական ժողովուրդների ազատասիրական ձգտումները։ Նրանք իրենց ուժն ու իմաստությունը քաղել են ժողովրդից և պայքարել նրա իդեալների իրականացման համար։

Էպոսի անունը նշանակում է «Կալեվի երկիր»։ Էպոսի 50 ռուներում (երգերում) պատկերված է ժողովրդի պայքարը ընդդեմ հյուսիսի խստաշունչ բնության և բռնակալ Լոուհիի։ Պայքարը առաջնորդում է էպոսի գլխավոր հերոս, երգասաց Վյայնյամեյնենը։ Էպոսում զգալի տեղ են գրավում նաև կենցաղի, սիրո, աշխատանքի պատկերները։

Էպոսը նկարազարդել է ֆինն նկարիչ Աքսելի Գալեն-Կալելան։

1797թ-ին Համբուրգում տպագրված «Ասք Իգորի գնդի մասին» գրքից հանվում են կրկնօրինակները, որոնցից մեկը՝ Եկատերինա Երկրորդ թագուհու համար, իսկ ռուսական առաջին ինքնաթիռներից մեկը կոչվել է «Իլյա Մորոմեց»։

«Ասք Իգորի մասին» էպոսը ստեղծվել է 12-րդ դարում, բայց պատմությանը և գրականագիտությանը հայտնի է դարձել միայն 1795թ.։ Պոեմն ունի պատմական հիմք։ Քոչվոր ցեղերը՝ պեչենեգներն ու պոլովցիները, որոնք ապրում էին դնեպրի, Սև և Ազովի ծովերի մոտ, հարձակվում էին առևտրական նավերի վրա, թալանում դրանք, հաճախ էլ մուտք էին գործում բուն ռուսական սահմանները, կողոպտում բնակիչներին։ Ռուս իշխանները (Կիևի մեծ իշխան Սվյատոսլավ Վսեվոլոդովիչ, հյուսիսային իշխան Իգոր) համախմբվում են և հակահարված տալիս քոչվոր ցեղերին։ Սա է ընկած «Ասքի» հիմքում, որը բաղկացած է 3 մասից։ «Ասքը» հայրենասիրական

բովանդակություն ունի. ռուս իշխանների միանալու, ներքին երկպառակությունները դատապարտելու և թշնամու դեմ պայքարի կոչ կա։ «Ասքում» կան նաև քնարական շեղումներ, կերտված է նաև ռուս կնոջ՝ Յարոսլավնայի կերպարը՝ լի սիրո ջերմությամբ և նվիրվածությամբ։

Համամարդկային է օտարի, թշնամու դեմ պայքարը, հայրենասիրությունը, ընտանիքի նկատմամբ սերը, քնարականությունը, հերոսականությունը։ Ռուսական բիլինաների հերոսական կերպար է նաև Իլյա Մուրոմեցը՝ դյուցազուն, որը մարմնավորում է հերոս-մարտիկի ընդհանուր ժողովրդական կերպարը։

Աշխարհի տարբեր ծայրերում ու տարբեր ժամանակներում ստեղծված էպոսները ունեն ընդհանուր, համամարդկային գծեր. նրանք մարդու երազանքների, որգու, կամքի մարմնացումն են։

«ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍԻ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն է ու զարգացումը: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից. այն մեր ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմազանության մեջ: Դրա մեջ կարևոր դեր ունեն հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: Նրանցում արտացոլված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, արժեքային մոտեցումներն ու դիրքորոշումը, մարդասիրական գաղափարները, երազանքները:

Այդպիսի ստեղծագործություններից է հայոց էպոսը՝ «Սասունցի Դավիթը», որը առաջին անգամ գրի է առել Գ. Սրվանձտյանը: Էպոսում արտացոլված են մեր ազգի հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը: Կարևոր է այն գիտակցությունը, որ կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ստեղծմամբ ու, ամենակարևորը, պահպանմամբ: 2012թ-ի դեկտեմբերի 5-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի որոշմամբ համաշխարհային ոչ նյութական մշակութային արժեքների շարքում ընդգրկվել է նաև «Սասնա Ծռեր» կամ «Սասունցի Դավիթ» էպոսի կատարողական դրսևորումները:

ՌԴ ԿԳՆ-ն աշակերտներին խորհուրդ է տալիս արտաժամյա ընթերցել «Սասունցի Դավիթ» էպոսը: «Սասունցի Դավիթ» էպոսը հայտնվել է ՌԴ կրթության և գիտության նախարարության արտաժամյա ընթերցանության համար խորհուրդ տրվող 100 գրքերի շարքում:

Հայաստանում արվեստի տարբեր ճյուղերի գործիչներ անդրադարձել են էպոսի թեմային (կերպարվեստ՝ Հ. Կոջոյան, Ե. Քոչար, Մ. Աբեղյան, Էդ. Իսաբեկյան, Արտ. Հովսեփյան, երաժշտություն՝ Գ. Բուդաղյան, Էդ. Հովհաննիսյան, կինոարվեստ՝ Արման Մանարյան, «Սասնա ծռեր» մուլտֆիլմ):

Շատ գրողներ էլ անդրադարձել են հայոց էպոսի մշակմանը՝ Հ. Թումանյան, Ավ. Իսահակյան, Ե. Չարենց, Ն. Զարյան, Հ. Օշական:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին սփյուռքահայերի հանգանակությամբ ստեղծվել է «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը:

Դարերով բանավոր պատմվելով՝ ժողովրդական մտածողության մեծագույն արտահայտությունը՝ «Սասունցի Դավիթը», դարից դար, ասացողից ասացող իր մեջ է ներառել հինավուրց ժողովրդի հոգևոր մշակույթի գանձերը, մտածողությունը, խորհուրդները, արժեհամակարգը: Այն դաստիարակության յուրօրինակ դարբնոց է:

Արժեհամակարգի բուրգի գագաթին է հայրենասիրությունը՝ հողի, երկրի պաշտպանությունը, որը ճյուղից ճյուղ չի թուլանում, ընդգրկում է այլ ձևեր ու սահմաններ:

Ստեղծվելով արաբական տիրապետության դեմ պայքարի ժամանակաշրջանում՝ 8-10 դարերում, իր մեջ ունենալով նախաստեղծ ժամանակներից հիշողությունն ու առասպելական մտածողությունը՝ էպոսում ժողովուրդը իր իդեալ հերոսին(ներ) օժտում է գերբնական-առասպելական-տիտանական ուժով (թշնամին ևս պակաս ուժ չպիտի ունենար), որ հետո այն փոխանցվեր սերնդեսերունդ և պահպաներ երկիրն ու ժողովրդին: Այս գործում, իհարկե, պիտի մեծ դեր ունենար տարերքի ուժը՝ ջուրը:

Ծով ու ջրային մեր պաշար չունեցող ժողովրդի կյանքում ջուրը մեծ դեր է ունեցել : Բացի կենցաղային նշանակությունից՝ ջուրը օգտագործվել է նաև եկեղեցում. օրհնվել է մյուռոնը, ավազանում կնքվել երեխան:

Ծովինարի մեկ լի և մեկ կիսատ բուռ ջրից այլ երկրում ծնվում են երկվորյակ եղբայրներ, որոնք, փախչելով Բաղդադի խալիֆի իշխանությունից, հիմնում են երկիր, կառուցում բերդ, ջրից հանում զենք ու զրահ, իսկ Դավիթը կռվից առաջ զորանում է ջրում՝ Կաթնաղբյուրում, որը նրան ուժ է տալիս:

Հողը՝ որպես տարերք, ուժ է տալիս հունական հերոսներից Անթեյին, հայերից՝ Արշակին (Փավստոս Բուզանդ «Արշակ և Շապուհ»):

Ժողովրդի անվտանգության, լինելիության գլխավոր խորհուրդներից մեկը ժառանգականությունն է: Սերունդների հաջորդականությանը իրար է կապում չորս ճյուղ: Ճյուղից ճյուղ անցնելով՝ այս խորհուրդը դառնում է արժեհամակարգային իրողություն: Ջրից ծնվելով՝ Սանասարն ու Բաղդասարը փորձում են ճշտել իրենց ծագումը (հասակակիցները նրանց «բիձ» են անվանում): Սա նաև բարոյականության ու արժանապատվության խնդիր է տղաների շրջանում:

Մեծ Մհերը, Մսրա Մելիքի հետ կապած պայմանի համաձայն, լինում է Մսրում (Ձենով Հովանը հորդորում է չգնալ) ու յոթ տարի ոչ սթափ վիճակում մնում այնտեղ. նա մեղք է գործում՝ ժառանգ թողնելով թշնամուն: Բայց այդ ժամանակ նա չի դառնում Սասունի տերը. նա ուզում է բռնազավթել Սասունը: Սասունի իսկական տեր-կառավարիչը ծնվում է հայրենի երկրում: Սա ևս արժեհամակարգային խնդիրներից է:

Սասուն վերադարձից հետո Մեծ Մհերը մտահոգ է ժառանգի, ուրեմն նաև երկրի անվտանգության համար: Մհերը և Արմաղանը հանուն երկրի անվտանգության պատրաստ են անձնազոհության. նրանք կյանքի գնով որդի են ունենում:

-Աստված թող մեկ տղա տա մեզ,
Էրթա Մելիք օձիք բռնի,
Թող չհանգչի Սասնա ճրագ,
Աստծու գառ գել չի ուտի:
…Մեր տան անուն չի կորսվի[2]:

Մսրում Մեծ Մհերից ծնված Մելիքը դառնում է Սասունի թշնամին, իսկ Դավիթը՝ երկրի պաշտպան՝ հորից ժառանգելով նրա ուժը, քաջությունը, երկրի ու ժողորդի հանդեպ ունեցած սերը: Բայց վերջինս գործում է մի սխալ, որի համար էլ պատասխան է տալիս կյանքով: Չկատարելով Չմշկիկ Սուլթանին տված ամուսնության խոստումը՝ Դավիթը «երդմնակոտոր» է լինում և սպանվում իր աղջկա նետով, այսինքն՝ երկու դեպքում էլ մենք մեր միջից ստեղծում ենք մեր թշնամուն:

Այս հարցի վերաբերյալ տարակարծությունները շատ են: Հովսեփ Օրբելին գրում է. «Իր դստեր թույլ տված ձեռքով Դավթի մեջքին արձակած նետը նրան մահ է պատճառում: Դյուցազնի մեջքը հավանաբար ջրդեղած չէր կենարար հեղուկով, և թիակների արանքը մնացել էր խոցելի»[3]:

Անխոցելի են Դավիթն ու Աքիլլեսը:Կարծում ենք՝ էպոսների զուտ արտաքին նմանություն չէ սա. Աքիլլեսը անխոցելի է. չունի հողեղեն էություն: Այն, ինչ հողեղեն է, խոցելի է, բայց Աքիլլեսն էլ խոցելի էր:

Սասնա տան վերջին ժառանգը՝ Փոքր Մհերը, մնում է անժառանգ հոր անեծքով: Արտավազդը ևս անժառանգ է հոր անեծքով:

---

[2] «Սասունցի Դավիթ» Լույս, 1981, էջ 123:
[3] Հ. Օրբելի, Հայկական ժողովրդական էպոսը, էջ 126:

Ինչու՞ չորս սերունդ: Կարծում ենք՝ սերնդի հիշողությունը չորս սերունդ է: Ըստ լեզվաբան, գրականագետ Թադևոս Տոնոյանի՝ Փոքր Մհերը վերածվում է խորհրդանիշի. «Եթե առաջին երեք ճյուղերում հիմնախնդիրը գեղարվեստական սպասարկման է ենթարկվում կերպարային մակարդակում, ապա 4-րդ ճյուղում կերպարից վերածվում է խորհրդանիշի, որպեսզի էպոսի սյուժեի ավարտը չդառնա ու չընկալվի որպես Սասնա տան ավարտ ու անկում»:

Հզոր է պետությունը, եթե ամուր են նրա հիմքն ու պատերը, իսկ նրա բնակիչը ունի պետական մտածողություն, մտածում է նրա ամրության մասին:

Սասնա բերդը երկրի, պետության խորհրդանիշն է: Սանասարն ու Բաղդասարը Սասնա բերդը կառուցում են այն բանից հետո, երբ ավարտում են շինականների տների կառուցումը: Ամուր է Սասնա բերդը. մեկ տարի է տևում նրա շինարարությունը: Այդ հզորության մասին խոսում է վարպետը.

---Սանասար, էս ինչպե՞ս տի շարենք,

Ես չեմ կարնա էս քարափներ իրար տալ[4]:

Դրա մասին խոսում է ոչ միայն կառուցող վարպետը, այլև ալևոր ծերունին, որի ասածի հիման վրա բերդը կոչվում է Սասուն.

---…Էս ի՞նչ սասուն քարեր են

Դուք էն սասուն քարեր

Ինչպե՞ս հաներ եք էն վերին տեղ,

Ու քարե սան սուն եք զարկե.

Էս տուն չեք շինե դուք

Ապա սասուն մ ‘եք շինե[5]:

Էպոսի արժեհամակարգի հիմքերից են եկեղեցին, հավատը: Եկեղեցին՝ իբրև ազգային հոգևոր ինքնության հաստատություն, սկզբից ևեթ ժողովրդական հերոսների ուշադրության կենտրոնում է:

Գագիկ թագավորը Ծովինարին քահանայի հետ Բաղդադ ճանապարհելը համարում է կարևոր հանգամանք: Հետո քահանան Սանասարին ու Բաղդասարին գրել-կարդալ է սովորեցնում: Սանասարը բերդի կառուցումից հետո ավարտում է նրա շինարարությունը, ուրեմն՝ եկեղեցին բերդից՝ պետությունից հետո կարևոր

[4] Սասունցի Դավիթ, էջ 34:
[5] Նույն տեղում, էջ 34:

հաստատությունն է: Հետո հրեղեն ձի փնտրելիս նա ծովում տեսնում է եկեղեցի, որտեղ երազում Մարիամ Աստվածածինը նրան ուղղություն է ցույց տալիս:

Մեծ Միերը կառուցում է Մարութա վանքը, Դավիթը՝ վերաշինում ավերված վանքը: Թշնամին չի հանդուրժում Սասնա տան հոգևոր անկախությունը և ավերում է երկրի սրբությունները:

Հայրենիքի ու նրա սրբությունների նկատմամբ ոտնձգությունները զայրացնում են Դավիթին, և նա արմատահան ծառի բնով բնաջնջում է վանքը ավերած զորքին ու միայն Խոլբաշուն թողնում իբրև վկա, որ լուրը հասցնի Մսրա Մելիքին: Որքան էլ սասունցիները փորձում են Դավթից տարբեր պատճառներով թաքուն պահել օտար բռնակալի վայրագությունները, այնուամենայնիվ ազգային-հոգևոր ստրկացման և ֆիզիկական բնաջնջման փորձերը տապալվում են,իսկ պատերազմի ու բռնության խորհրդանիշ սրերը,Դավիթի կարծիքով, «խորոտ խոփ» կլինեն:

Այս հարցը այսօր առավել արդիական է. վկան են հարևան երկրի վայրագությունները: Գրավյալ տարածքներում այլադավան թշնամի հարևանդ վերացնում կամ վերաձևում-հարմարեցնում է մեր սրբավայրերը:

Սանասարը ջրից հանում է Խաչ Պատերազմին, որը հաճախ էպոսի պատումներում կոչվում է Խաչ Պատրաստի կամ Խաչ Պատրազի: Այն հիշատակվում է Սասնա հերոսների բոլոր երդումներում և հիշեցումներում: Հիմնականում հանդես է գալիս Տեր Կենդանին՝ Արարիչը, Աստվածային խորհուրդների հետ: Այն արարող ուժի, զորության, էներգիայի ու հաղթանակի իմաստներ է արտահայտում:

Սուրը՝ Թուր Կեծակին, առաջին անգամ հայտնվում է Սանասարի երազում: Աստվածամայրը Սանասարին ասում է, որ վեր կենա և յոթ «ծունր աղոթք» անի.

Արժան ըլնիս, քեզ կհասնի:

Այսինքն՝ սուրը ունի աստվածային խորհուրդ. տրվում է արժանավորին: Ոչ թէ մարդը, այլ Աստվածամայրն է Սանասարից պահանջում՝ արժանիին հասնելու համար պետք է փորձաքննություն անցնի և հավատարիմ լինի, որից հետո հզորանում է:

Խաչ Պատերազմին ունի նաև պատժիչ հատկություն: Դավիթը Չմշիկ Սուլթանի հետ պայմանավորվել էր և «Խաչ Պատերազմին» երդումով հաստատել, բայց մոռացել էր: (Հասարակ ժողովրդի մեջ տարածված է եղել մի երդում, երբ որևէ բան էին ասում, կատարում էին՝ «էն խաչը» ասելով):

Միհրն ու Արմաղանն էլ հավատարիմ չեն մնում երդմանը: Նրանք երկնային ուժերի դրած օրենքից շեղվում են իրենց վարքագծով:

Ազատության ձգտումը էպոսի համամարդկային արժեքներից է, նաև դրանից բխող մարդասիրությունը, մարդու, ընդհանրապես, ժողովրդի իրավունքների պաշտպանությունը, որից էլ հետևում է ազատությունը բռնադատող, ազատ ապրելու իրավունքը ոտնահարող բռնակալի դեմ պայքարը:

Սասնա հերոսները ազատասեր են, առհասարակ մարդու, ժողովրդի իրավունքների պաշտպան: Նրանք երկիրն ու ժողովրդին ազատում են առյուծից, դևերից, վիշապներից (սրանք հիշեցնում են հեքիաթի հերոսներին, վիշապաքաղ Վահագնին), Մսրա Մելիքից, Բապ Ֆրենկից: Բացի դրանից՝ նրանք կնքում են չհարձակվելու, իրար օգնելու պայմանագրեր (Մեծ Միհր և Մսրա Մելիք), գաղտագողի չեն հարձկվում այլ երկրի վրա (Սասունցի Դավիթ)՝ ի տարբերություն Մսրա Մելիքի, որը «ջոկ» մարդկանց հետ խորհրդակցելուց հետո արյունով է գրում ռազմակոչը:

Վերոհիշյալի մասին հետաքրքրություն է առաջացնում փիլիսոփա Սեյրան Զաքարյանի դիտարկումը. «Դրա պատճառը ոչ միայն այն է, որ Դավիթը վստահում է իրեն, այլև այն, որ Սասունը չունի ո՛չ պաշտպանական կառույցներ, ո՛չ բանակ, ո՛չ էլ իրենց պաշտպանությամբ մտահոգ իշխանություններ:

Այս... վերաբերմունքից երևում է, որ հայկական էպոսում երևութապես գոյություն ունի՝ հերոսի (ոգու) և ժողովրդի (մարմնի) զուգահեռ իրականություն, որոնց մինչև կապը խզված է»[6]:

Հայ ժողովրդի երազային և իրական աշխարհներում իդեալ հերոսները փրկօղակի դեր են կատարում. նրանք առաջարկում են գաղափարը, առաջնորդում, հաղթում, բայց չունենալով իրենց կողքին զորք ու պետություն՝ նրանց հաղթանակը վերջնական չի դառնում, կիսատ է մնում:

Ընտանիքը մնայուն, կենսական արժեք է, հասարակության գոյության հիմքը: Որպես արժեք՝ ընտանիքը միաժամանակ բարոյական սկզբունքների, ավանդույթների շտեմարան է: «Ընտանիքը բոլոր ժամանակներում եղել է հասարակության արժեքային համակարգի կրողը՝ չնայած նրան, որ պատմամշակույթային յուրաքանչյուր

[6] Սեյրան Զաքարյան, Հերոսի և ժողովրդի փոխհարաբերության էպիկական և պատմական ձևերը հայոց ինքնության մեջ-էջ 214:

ժամանակաշրջան իր կնիքն է դրել ընտանեկան արժեքների, սովորույթների և ավանդույթների ձևավորման և հասարակության կողմից դրանց ընկալման վրա»[7]:

«Սասնա ծռեր» էպոսում մեծ դեր ունի ընտանիքը: Սասնա տան բոլոր հերոսները ունեն ընտանիք, կին, երեխա. ամուսնություն և սեր արժեքները գտնվում են բարձրության վրա: Էպոսի կանայք սիրո մեջ նախաձեռնող են, հավատարիմ ու ընտանիքի պաշտպան: Ծովինարը ամեն ինչ անում է որդիներին պաշտպանելու, կրթելու և նրանց կյանքը փրկելու, հայեցի դաստիարակության համար: Դեղձուն Ծամը, Խանդութը սիրո առաջարկությունը իրենք են անում, իրար արժանի լինելու համար փորձության են ենթարկում սիրելի էակներին:

Բացի կանանցից ու երեխաներից՝ ընտանիքի անդամ են Քեռի Թորոսը, Ձենով Հովանը, Վերգոն, որոնք հարկ եղած ժամանակ երիտասարդների կողքին են՝ խորհուրդ տալու, զգուշացնելու, նեղության պահին օգնության հասնելու, անզգույշ քայլից հեռու պահելու համար: Փոքր Միհերին հայրն ու մայրն են խորհուրդ տալիս Ագռավաքարում փակվելու:

Ընտանիքում, սիրո մեջ անհավատարմությունը անպատիժ չի մնում: Վկա Մեծ Միհերի, Դավթի արարքները. նրանք կյանքով են հատուցում:

Էպոսը ժողովրդական ստեղծագործություն է, հերոսները՝ նրա իդեալները՝ իրենց թերություններով ու թուլություններով: Նրանց մեջ ժողովուրդը մարմնավորել է իդեալը թագավորի, կնոջ, ընտանիքի, բարեկամության, ազատության մասին, թեկուզ դրանք շատ անգամ անիրականանալի են: Գերբնական ուժի տեր այդ մարդկանց արժեհամակագում աշխատանքի պաշտամունք կա: Սասունի տերը, նրանց որդին, թոռը կառուցող-շինարար են, կատարում են հասարակ աշխատանքներ. գառնարած են, նախրապան, որսորդ, տան կառուցման համար իրենք են քար հանում: Հասարակության հասարակ անդամների համար ոչ մի աշխատանք խորշելի չէ: Սասնա հերոսները մեծամիտ չեն, այլ մեծահոգի, խեղճի կողքին են, հասարակ մարդու խոսքին և խորհրդին հետևող: Դավիթը չի անտեսում Արտատեր Պառավի, պատերազմի դաշտում արաբ ծերունու ճշմարիտ խոսքերը և գտնում իրական թշնամուն:

---

[7] *Բաբայան Ի. Գ., Ընտանիքի՝ որպես սոցիալ-մշակույթային միջավայրի ազդեցությունը երեխայի դաստիարակության վրա:*

էպոսի աշխարհագրական անունները ևս մեծ դեր ունեն հայ ժողովրդի արժեհամակարգում։ Դրանք հիմնականում Արևմտյան Հայաստանում են գտնվում կամ հարևան երկրներում։

1. Միերի դուռ – Վան քաղաքի մոտ է
2. Արզրում – Արևմտյան Հայաստանի Կարին քաղաքն է
3. Նեմրութ – լեռ Հայաստանում
4. Խլաթ – քաղաք Արևմտյան Հայասանում
5. Բաթմանա կամուրջ – կամուրջ Արևմտյան Հայաստանում
6. Սասուն – քաղաք Արևմտյան Հայաստանում
7. Հալեպ – Սիրիայի 2-րդ նշանակությամբ քաղաքը
8. Բաղդադ – Իրաքի մայրաքաղաքը

Հայրենի հողի ու երկրի, ազատության ու անկախության, ընտանիքի ու զավակի, հարևան ժողովուրդների հետ բարեկամության, հավատի ու խաղաղ աշխատանքի համար պայքարը «Սասունցի Դավիթ» էպոսի արժեհամակարգի հիմքն է։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Սասունցի Դավիթ» էպոսը, ինչպես նաև շատ ժողովուրդների էպոսներ ստեղծվել են տվյալ ժողովրդի համար պատմական կարևոր ժամանակաշրջանում: Նրանցում արտահայտվել են ժողովուրդների բարոյական, հայրենասիրական, գեղագիտական ըմբռնումները հայրենիքի և հողի, սիրո և ընտանիքի, ազատության և արդարության, բարեկամության և աշխատանքի վերաբերյալ: Շատ հաճախ դրանք դուրս են գալիս ազգային շրջանակներից և դառնում համամարդկային արժեհամակարգի մաս, մարդկային ընդհանուր պատկերացումների լրացում, որն ավելի սրտամոտ է դարձնում ոչ միայն քո նախնիների կյանքն ու կենցաղը, նրա վարքագիծն ու պայքարը, այլ քեզանից շատ հեռու ապրող, գուցեև քեզ հետ ոչ մի անգամ չառնչվող ժողովուրդների նախնիների պատմությունը: Այս ամենով դու դառնում ես հողագնդի վրա ապրող ժողովուրդների պայքարի մի մասնիկը. այն այսօր շատ ավելի արդիական է, քան երբևէ:Խաղաղության ,արդարության, տարբեր ժողովուրդների մշակութային ժառանգության պահպանության համար մղվող պայքարը պետք է դարձնել միասնական ու բռնել ագրեսորի ձեռքը. չէ՞ որ հնագույն ժամանակներում ստեղծված էպոսներում ժողովրդի ցանկությունն է դա:

Հավելված

ՀԵՐՈՍՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԳԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

վերաբերմունք



Opium